

ԴԻՖՏԵՐԻԱ  
ՊՐԿԱԽՏ ԵՒ  
ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ

# ՊԱՏՎԱՍՏՆԵՐ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

Պատվաստի մասին ճշտ Տեղեկություններ կան իսպաներենով եւ Այլ Լեզուներով: Տես [www.immunize.org/via](http://www.immunize.org/via):

### 1 Ինչու՞ է պետք պատվաստվել

Դիֆտերիան, պրկախտը, եւ կապույտ հազը լուրջ հիվանդություններ են որոնք առաջանում են մանրեների միջոցով: Դիֆտերիան եւ կապույտ հազը տարածվում են անհատից անհատ: Պրկախտը մարմին է ներթափանցում կտրվածքների եւ վերքերի միջոցով:

ԴԻՖՏԵՐԻԱՆ կոկորդի ետին պատի վրա հաստ խավ է առաջացնում:

- Այն կարող է առաջ բերել շնչառության դժվարություն, անդամալուծություն, սրտի աշխատանքի խախտում, եւ նույնիսկ մահ:

ՊՐԿԱԽՏԸ (Ջղաձգություն) սովորաբար ամբողջ մարմնում առաջացնում է մկանների ցավոտ պրկվածություն:

- Այն կարող է առաջնորդել “ջղաձգության” երբ անհատը չի կարող բերանը բացել կամ կոպ տալ:
- Պրկախտի 10 դեպքերից 2-ը հասցնում է մահվան:

ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁԸ (Whooping Cough) առաջացնում է հազի այնպիսի երկարատև նուրբներ որը նորածինների մոտ առաջացնում է ուտելու, խմելու, կամ շնչելու դժվարություն: Այն կարող է տևել շաբաթներ:

- Այն կարող է առաջացնել թոքաբորբ, ցնցումների եւ ուշաթափության նուպաներ (կծկումներ), ուղեղի վնասվածք, եւ մահ:

Դիֆտերիայի, պրկախտի, եւ կապույտ հազի (DTaP) պատվաստները կարող են օգնել կանխելու այս հիվանդությունները: Երեխաների մեծամասնությունը որոնք պատվաստված են (DTaP)-ով պաշտպանված կլինեն մանկական տարիքում: Եթե մենք դադարեցնենք պատվաստումները, ապա շատ ավելի երեխաներ կարող են ձեռք բերել այս հիվանդությունները:

DTaP-ն հին DTP պատվաստի արելի ապահով տարբերակն է: DTP-ն այլևս չի օգտագործվում Միացյալ Նահանգների մեջ:

### 2 Ո՞վ եւ ե՞րբ պետք է պատվաստվի DTaP-ով

Երեխաները պետք է ստանան DTaP պատվաստի 5 դեղաչափեր, մեկ դեղաչափ յուրաքանչյուր հետևյալ տարիքում.

- ✓2 ամսական
- ✓4 ամսական
- ✓6 ամսական
- ✓15-18 ամսական
- ✓4-6 տարեկան

DTaP պատվաստը կարող է տրվել մյուս պատվաստների հետ միաժամանակ:

### 3

### Որո՞չ երեխաներ չպետք է ստանան DTaP պատվաստ կամ պետք է սպասեն

- Թեթեամկորեն հիվանդ երեխաները, օրինակ մրսածություն, կարող են պատվաստվել: Մաքայն այն երեխաները որոնք ունեն հիվանդության միջակ կամ ծանր վիճակ, նախքան DTaP պատվաստ ընդունելը սովորաբար պետք է սպասեն մինչև ապաքինում:
- Որեւէ երեխա որ ունեցել է կրանքի սպառնացող գերզգայնական հակազդեցություն DTaP-ի մեկ դեղաչափի նկատմամբ, չպետք է ընդունի մեկ այլ դեղաչափ:
- Որեւէ երեխա որ տառապել է ուղեղային եւ ներվային հարմակարգի խանգարումով DTaP-ի մեկ դեղաչափ ընդունելուց հետո 7 օրվա ընթացքում, չպետք է ընդունի մեկ այլ դեղաչափ:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եթե ձեր երեխան.
  - երբեւէ ունեցել է նուպաներ կամ ուշաթափում եղել DTaP-ի մեկ դեղաչափ ընդունելուց հետո,
  - անդադար լացել է 3 ժամ կամ ավելի DTaP-ի մեկ դեղաչափ ընդունելուց հետո,
  - ունեցել է 105°F-ից ավելի ջերմություն DTaP-ի մեկ դեղաչափ ընդունելուց հետո:

Հավելյալ տեղեկությունների համար դիմեցեք ձեր առողջապահական խնամք ապահովող բժիշկին: Այս երեխաներից ոմանք այլևս չպետք է ընդունեն կապույտ հազ պատվաստի մի այլ դեղաչափ, բայց կարող են ընդունել կապույտ հազ չպարունակող DT պատվաստ:

### 4

### Ավելի բարձր տարիքի երեխաներ եւ չափահասներ

DTaP-ն արտոնագրում չէ պատանիների, չափահասների կամ 7 տարեկան եւ ավելի մեծ երեխաների համար:

Սակայն տարիքով մեծերը եւ պետք ունեն պաշտպանվելու: Tdap անվամբ պատվաստը նման է DTaP պատվաստին: 11-ից 64 տարեկան մարդկանց հանձնարարվում է ստանալ Tdap-ի մեկ դեղաչափ: Td անվամբ մի ուրիշ պատվաստ պաշտպանում է պրկախտի, դիֆտերիայի եւ կապույտ հազի դեմ: Այն հանձնարարվում է յուրաքանչյուր 10 տարին մեկ: Այս պատվաստների մասին կան առանձին Պատվաստի Տեղեկության Հաստատագիրներ:

5

Որո՞նք են DTap պատվաստի վտանգները

Դիֆտերիա, արևախտ, եւ կապուտ հազ հիվանդությամբ վարակելը ավելի վտանգավոր է քան DTap-ով պատվաստվելը:

Այնուամենայնիվ, պատվաստը ինչպես որեւէ այլ դեղամիջոց, կարող է լուրջ բարդություններ պատճառել, ինչպիսիք են սուր գերզգայնական հակազդեցություն: DTap պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Թեթեա Բարդություններ (Սովորական)

- Ջերմություն (յուրաքանչյուր 4 երեխայից 1-ի մոտ)
- Կարմրություն կամ ուռածություն պատվաստման մասում (յուրաքանչյուր 4 երեխայից 1-ի մոտ)
- Ցավ եւ փափկություն պատվաստման մասում (յուրաքանչյուր 4 երեխայից 1-ի մոտ)

Այս բարդությունները ավելի հաճախ պատահում են DTap սրվումների 4րդ եւ 5րդ դեղաչափերը ընդունելուց հետո՝ քան ավելի վաղ դեղաչափից հետո: Երբեմն DTap պատվաստի 4րդ եւ 5րդ դեղաչափերի ընդունումից հետո սրվե՛լված ձեռքը կամ ոտքը ամբողջապես ուռչում է , որը տևում է 1-7 օր (յուրաքանչյուր 30 երեխայից 1-ի մոտ):

Այլ թեթեա բարդությունների չարքին են պատկանում.

- Անհանդարտություն (յուրաքանչյուր 3 երեխայից 1-ի մոտ)
- Հոգևածություն կամ ախորժակի կորուստ (յուրաքանչյուր 10 երեխայից 1-ի մոտ)
- Փսխում (յուրաքանչյուր 50 երեխայից 1-ի մոտ)

Այս բարդությունները ընդհանրապես պատահում են պատվաստվելուց հետո 1-3 օրվա ընթացքում:

Միջին Բարդություններ (Անսովոր)

- Խոպաներ (լվկումներ) (յուրաքանչյուր 14,000 երեխայից 1-ի մոտ)
- Անդադար լաց, 3 ժամ եւ ավելի (յուրաքանչյուր 1000 երեխայից 1-ի մոտ)
- Բարձր ջերմություն, 105°F-ից ավելի (յուրաքանչյուր 16,000 երեխայից 1-ի մոտ)

Սուր Բարդություններ (Շատ Հազվադեպ)

- Լուրջ գերզգայնական հակազդեցություն (յուրաքանչյուր մեկ միլիոն դեղաչափից 1-ի դեպքում)
- Բազմաթիվ այլ սուր բարդությունների պարագաներ են գրանցվել DTap պատվաստից հետո: Դրանցից են.
  - երկարատև նոսրաներ, մահաբուն կամ գիտակցության տկարացում
  - մնայուն ուղեղի վնասվածք:

Այս բարդությունները այնքան հազվադեպ են որ դժվար է նրանց առաջագման պատճառը վերագրել պատվաստին:

Ջերմության կարգավորումը հատկապես կարեւոր է երեխաների մոտ որոնք որեւէ պատճառով նոսրաներ են ունեցել: Դա նույնպես կարեւոր է եթե ընտանիքի այլ անդամներ էլ են նոսրաներ ունեցել: Դուք կարող եք նվազեցնել ջերմությունն ու ցավը առանց ստացիոնի պարունակող ցավազրկող տալով պատվաստի ընդունման ժամանակ եւ հաջորդ 24 ժամվա ընթացքում, հետևելով դեղահատի օգտագործման ցուցմունքներին:

6

Ի՞նչ անել չափավոր կամ սուր հակազդեցությունների առկայության դեպքում

Ինչի՞ պետք է ուշադրություն դարձնեմ

Որեւէ անհավոր իրավիճակ, ինչպիսիք են լուրջ գերզգայնական հակազդեցությունը, բարձր ջերմություն, կամ անոսթիկ վարդակալեղայ: Լուրջ գերզգայնական հակազդեցությունը

Թժկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող հզորիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց թժկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

չափազանց հազվադեպ է որեւէ պատվաստի պարագային: Եթե հակազդեցություն առաջանա, հավանաբար այն կարտասահի պատվաստը ընդունելուց հետո մի քանի յուրեղներից մինչև մի քանի ժամվա ընթացքում: Հակազդեցության նշաններ են ջնջառության դժվարություն, խաբարտություն կամ խզզոց, մաշկաբորբ, դեղնություն, տկարություն, սրտի արագ բարսխում կամ գլխապտուտ: Եթե բարձր ջերմություն կամ նոսրաներ առաջանան, սովորաբար կարտահեն պատվաստը ընդունելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

Ի՞նչ պետք է անեմ

- Հեռաձայնեցեք թժկին, կամ անհատին տարեք թժկի մտա անհապաղ:
- Հայտնեցեք ձեր թժկին եղելության մասին, օրն ու ժամը եւ երբ էր տրվել պատվաստը:
- Տարբերք ձեր թժկին, հիվանդագրասին կամ ստորջառասիական բաժնին տեղեկագրելու հակազդեցության մասին գրանցելով Vaccine Adverse Event Reporting System (VAERS) ձեռք:

Կամ կարող եք գրանցել տեղեկագիրը VAERS-ի website-ի հետևյալ հասցեով [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) կամ հեռաձայնելով 1-800-822-7967:

VAERS-ը թժկական խոքոկոք չի տալիս:

7

Վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Հազվադեպ պարագայում եթե դուք կամ ձեր երեխան պատվաստի նկատմամբ ցուցաբերեք լուրջ հակազդեցություն, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր, տուժվածների խնամքի ծախսերը հոգալու նպատակով:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր (National Vaccine Injury Compensation Program) մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ այցելեցեք ծրագրի website-ը հետևյալ հասցեով [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation):

8

Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք մատուցող թժկին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստների մտա սին տեղեկատվական ծրարի ներդիր կամ կհանձնարարեն տեղեկության այլ աղբյուրներ: 1-888-767-4687
- Հեռաձայնեցեք ձեր ջրջանային կամ նահանգային առողջապահական բաժնի վարակամերժման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
  - Հեռաձայնեցեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
  - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետևյալ հասցեով [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

DCH-0469A

AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES  
Centers for Disease Control and Prevention

Vaccine Information Statement  
DTaP IM/4-589AN - Amendment (5/17/07) 42 U.S.C. §300aa-26  
Translated by Transcend Translations, Davis, CA [www.transcend.net](http://www.transcend.net)